Դուք և Ձեր ստոման

Ի՞նչ է ստոման

Ստոման հունարեն բառ է, որը նշանակում է «բացվածք» կամ «բերան»: Սովորաբար ստոմաները լինում են երեք տեսակի՝

- Կոլոստոմիա (խթաղու բերանբացում). Մեծ աղիքի դեպքում
- Իլեոստոմիա (զստաղիքի բերանբացում). Փոքր աղիքի դեպքում
- Ուրոստոմիա (միզուղիների բերանբացում). Ուրոստոմիան միզուղիների վարատում է

Ինչո՞ւ ես ունեմ ստոմա

Ձեր վիրահատությունը կարող է իրականացվել տարբեր պատճառներով, և Ձեր վիրաբույժն ու մասնագիտացված բուժքույրը կբացատրեն պատճառները: Գոյություն ունեն տարատեսակ հիվանդություններ և իրավիճակներ, որոնք կարող են հանգեցնել ստոմայի անհրաժեշտությանը, ինչպես օրինակ՝

- Խոցային կոլիտները (հաստ աղիքի բորբոքում)
- Կրոնի հիվանդությունը
- Դիվերտիկուլյոզ հիվանդությունը
- Կղկղանքային անպահությունը
- Քաղցկեղը
- Վնասվածքները
- Բազմապոլիպային ադենոմատոզը, ընտանեկան
- Ճառագայթային վնասվածքները
- Բնածին շեղումները
- Միզապարկի խանգարումները

Մինչև Ձեր վիրահատությունը

Մինչև վիրահատությունը Դուք կկարողանաք մեկ կամ երկու անգամ հանդիպել Ձեր վիրաբույժի և մասնագիտացված բուժքրոջ հետ: Հանդիպումների ընթացքում Ձեզ կտեղեկացնեն վիրահատության բոլոր մանրամասներին, կփոխանցեն գրավոր տեղեկություններ և, հավանաբար, կցուցադրեն որոշ պարագաներ՝ Ձեր կողմից ի նկատի ունենալու համար: Նախավիրահատական հանդիպումների ընթացքում Դուք ժամանակ կունենաք հարցեր տալ և քննարկել Ձեր խնամքի մանրամասները: Մինչև հանդիպումները խորհուրդ է տրվում նախապատրաստել հարցեր կամ թեմաներ, որպեսզի չմոռանաք հարցնել որևէ մանրամասն:

Խորհուրդ է տրվում նախավիրահատական այցելություններին գնալ ընտանիքի անդամի կամ խնամակալի հետ, քանի որ տրամադրվող տեղեկությունները շատ են և կարիք կլինի հիշել դրանք:

Ստոմայի խնամող թիմը կլինի հիմնական օգնողը վիրահատության ընթացքում և հասանելի կլինի խորհուրդների և աջակցության համար թե Ձեր, թե Ձեր ընտանիքի/խնամակալների համար:

salts HEALTHCARE
®Registered trade marks of Salts Healthcare Ltd. ©Salts Healthcare Ltd 2019. Products and trade marks of Salts Healthcare Ltd are protected by UK and foreign patents, registered designs and trade marks. For further details, please visit www.salts.co.uk

Ինչպիսի՞ տեսք կունենա իմ ստոման և ինչպիսի՞ զգացողություններ կունենամ

Շոշափելիս այն կլինի փափուկ, վարդագույնին մոտ կարմիր և խոնավ մակերեսով, մոտավորապես կլինի բերանի խոռոչի հյուսվածքի նման: Ստոման զուրկ է զգայնությունից, այնպես որ այն ցավոտ չի լինի: Սակայն, այն ունի արյան ուժեղ մատակարարում, և ժամանակ առ ժամանակ թեթև արյունահոսությունները համարվում են նորմա, հատկապես մաքրելու ընթացքում: Հավանաբար, նախապես Ձեր ստոման կլինի այտուցված և մի քանի շաբաթ կպահանջվի չափի փոքրացման համար: Ձեր ստոմայի եզրերը կլինեն փոքր կարեր, որոնք կլինեն ներծծվող, կամ ստոմայի խնամքի բուժքույրը կհեռացնի դրանք վիրահատությունից 1-2 շաբաթ հետո:

Վիրահատությունից հետո

Վիրահատությունից հետո արթնանալիս Դուք հոգնածություն կզգաք: Հնարավոր է, որ ունենաք մի շարք զգացողություններ այս ընթացքում և վիրահատությունից որոշ ժամանակ անց: Յուրաքանչյուրի համար այս զգացողությունները տարբեր են:

Ձեր մարմնի վրա կլինեն կաթոցիկներ և դրենաժներ (վիրափողակներ), սակայն անհանգստանալու կարիք չկա, քանի որ սա լիովին նորմալ է: Այս ամենը կհեռացվի, երբ հարկ լինի, և Ձեզ քիչ անհարմարություն կպատճառվի:

Յուրաքանչյուր ստոման տարբեր է, և մի փոքր ժամանակ կպահանջվի, մինչ այն սկսի գործել: Լավագույն տարբերակը կլինի քննարկել այս ամենը Ձեր խնամքի բուժքրոջ հետ:

Մաշկի խնամք

Ձեր ստոմայի խնամքի էական մաս է կազմում մաշկի խնամքը:

Վիրահատությունից անմիջապես հետո Ձեր ստոման և դրա շրջակա մաշկը կարող է այտուցված, անգամ մի փոքր գրգռված լինել: Պետք է պատրաստ լինել ակնկալել այս ամենը վիրահատությունից հետո, բայց լավ խնամքի և ժամանակի հետ վերջինիս տեսքը կբարելավվի:

Ստոմայի չափի և ձևի փոփոխության ընթացքում Ձեզ անհրաժեշտ պարագաները կարող են փոփոխվել: Ձեր ստոմայի կաղապարը կարող է փոփոխվել, և այն պետք է ստուգել առնվազն շաբաթական՝ առաջին 8 շաբաթների ընթացքում, կամ երբ չափազանց շատ առողջ մաշկ է տեսանելի անցքից:

Ստոմայի շուրջ մաշկը կարիք ունի ընթացիկ խնամքի և ուշադրության՝ կանխարգելելու և նվազեցնելու ցավի վտանգը: Ցավոտ, գրգռված կամ անգամ ճաքած մաշկի առաջացման դեպքում մի հետաձգեք դիմել Ձեր ստոմայի խնամքի բուժքրոջը՝ բուժման համապատասխան խորհրդի և այլընտրանքային պարագաների կարիքի համար:

salts HEALTHCARE CE ®Registered trade marks of Salts Healthcare Ltd. ©Salts Healthcare Ltd 2019. Products and trade marks of Salts Healthcare Ltd are protected by UK and foreign patents, registered designs and trade marks. For further details, please visit www.salts.co.uk

Կյանքը ստոմայի հետ

Հիվանդանոցից առաջին անգամ դուրս գրվելուց հետո Դուք հոգնածություն կզգաք և ամենօրյա գործողությունները, օրինակ՝ ցնցուղի ընդունումը, Ձեր հոգնեցնող կթվա: Սա նորմալ է, և ժամանակի հետ կանցնի: Հնարավոր է՝ վիրահատությունից հետո վերականգնման սկզբնական շրջանում որոշ ցավեր և անհարմարվետություն զգաք: Այս ամենը վերականգնման նորմալ մաս է: Այս ընթացքում խուսափեք ամուր գրկող հագուստներից, քանի որ Ձեր որովայնը կարող է ցավոտ և այտուցված լինել:

Նման մեծ վիրահատությունից հետո նորմալ է նաև զգայական լինելը, այնպես որ մի անհանգստացեք, երբ նախնական շրջանում ունենում եք «նեղված» կամ «արցունքոտ» օրեր: Ընտանիքի կամ ընկերների հետ խոսելը կարող է օգտակար լինել: Մի մտածեք, որ այս ամենը միայնակ է պետք հաղթահարել: Ձեր ստոմայի խնամքի բուժքույրը նույնպես հասանելի է օգնության համար, ինչպես նաև կարող են օգտակար լինեն հիվանդի աջակցության խմբերը:

Մի վախեցեք օգնություն խնդրելուց:

Նախնական շրջանում ստոմայի տոպրակը փոխելը կարող է դանդաղ լինել և, երբ վստահություն ձեռք բերեք, այս ամենը կդառնա Ձեր նորմալ ամենօրյա ռեժիմը:

salts HEALTHCARE

CE ®Registered trade marks of Salts Healthcare Ltd. ©Salts Healthcare Ltd 2019. Products and trade marks of Salts Healthcare Ltd are protected by UK and foreign patents, registered designs and trade marks. For further details, please visit www.salts.co.uk

1

2

3

4



5

6

salts HEALTHCARE

CE ®Registered trade marks of Salts Healthcare Ltd. ©Salts Healthcare Ltd 2019. Products and trade marks of Salts Healthcare Ltd are protected by UK and foreign patents, registered designs and trade marks. For further details, please visit www.salts.co.uk